

առջե՛ղ առաջիկա և զբանս խորինս: Ըստ Պետ-
րոսի տալ նմա ում պիտոյ իցէ. զիտես
ասէ, զգիրս սուրբս, որ կարող են միտ-
թարեւ. գրեալ է, բազումք անանց գրոց
ընտրողութեան ձգնեալք, ոչինչ օգտե-
ցան. զի ասացին սուրբ հարքն, ամենայն
առաքինութեան զտգիտութիւն, որոշու-
թեամբ խաղասցուք, ապա գնասցուք ըն-
թացցուք անդրէն յո՞՞՞՞ կարգի հարց-
մանցն ձերոց, զոր հանդերձեալ է մեր ար-
կանել ճառս և լուծմունս ի վերայ նոցա: ,,

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՄԻ ԲԱՆԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԵՒՆՔ

ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԵՆ ՎԵՐԱՅ.

Արկար ժամանակ է, որ գիշեր և ցերեկ
սնդադար խիղճս տանջում և ստիպում
է ինձ, մեր հոգեորականութեան վերայ
ձիշտ նկատողութիւն անելով, հանել ի
լոյս ճշմարտութիւնը, որն որ մի քանի նո-
րահաս մտքերից հալածվում է, և խնդրել
ձեզ, որ դուք ևս գործակից լինելով ինձ,
ձեր պատուական Մարտա լրագրի մի ան-
կիւնում տեղի տալ սորա:

Փորձը արդէն հաստատում է, որ իւ-
րաքանչիւր արհեստականք ունենում են
իւրեանց մէջ թէ յայտնի և թէ ծածուկ
ատելութիւն, ծագուած զանազան պատ-
ճառներից. իսկ մի քանի աշխարհականաց
գէպ ի հոգեորականութիւն ատելու-
թիւն ունենալն զարմացնում է ինձ, որ
սոքա փոխանակ միմեանց հետ սիրոյ և
կատարեալ հոգեոր միութեան՝ սկսում

են ատելով ատել մեր խնկիւն հոգեորա-
կանքը:

Օրինակի համար, եթէ սոքա (աշ-
խարհականք) մի անարգ և ագէտ հոգեա-
րականի մէջ՝ մի մասնաւոր յանցանք են
նկատու, իսկոյն ոչ միայն փոզոցներում,
հրապարակներում, այլ նա և լրագրի-
ների մէջ, զանազան ազգերի առաջ և
արձանացներով այդ յանցանքը, արտա-
րակում են ոչ միայն յանցաւորին, այլ
ընդհանուր հոգեորականութեան, պա-
հանջելով դոցանից կատարեալ իմաս-
տութիւն, կատարեալ սրբութիւն և մի-
անգամայն հրեշտակային վարք, վասն զի
հոգեորական էն. իսկ իւրեանց ամենամեծ
պահանջութիւնները և յանցա՛րքը ծած-
կելով գրուանի տակ՝ համարում են նե-
րիւն, վասն զի աշխարհական էն:

Պարզ է, որ այսպիսի պահանջը մի
քանի մարդոց ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի
ատելութեան ոգի ծագուած ինքնաբերա-
նիւնից, վասն զի այդպիսիք ինչպէս փոր-
ձը ցոյց է տալիս, որ կամ իւրեանք միմի-
այն իւրեանց կատարեալ ուսման և հո-
գեորականութեան արժանի հոգեորական
կարծելով, մի ամբարտաւանութեան և
անհնազանդութեան հոգւով, ցանկա-
նում են իւրեանց աթոռը բարձրացնել
հոգեորականութեան աթոռից, և կամ
անհետապետ-նիւնից, վասն զի դոքա կողմ-
նակի կերպիւ կարդալով միմիայն օտար
ազգի Ակիղիցական Պատմութիւնները,
կարծում են թէ շայոց հոգեորականք
նոյն ընթացքով և ուղղութեամբ են
վարուել ազգի հետ, ինչպէս նոքա: Ուս-
տի ինձ պարտաւոր եմ համարում պա-
տասխանել այս հարցմանս:

Երբեք՝ Հայոց Հոգեւորականք խնդրանք
մինչև ցայսօր հասնաւորէր և ազգագրա-
անբանք էն Լէկեղեցոյ՝ ընդ հասնաւորեաց և
ճառագէտք:

Ո՛րք ազգի պատմութիւնը չաւ կար-
գացողը, ուշի ուշով մտածողը և ող-
ջախոհութեամբ դատողը անպատճառ նստ
և փորձով կհասկանայ, որ ինչպէս հնումն,
այնպէս էլ նորումս մեր ազգութեան կը-
րօնի և լեզուի հիմն հաստատուել և
պահպանուել է հոգեւորականաց ձեռք:
Ի հարկէ եթէ Լուսաւորիչը չլինէր՝ կորց-
րած էր Հայաստանը իւր Արօնը և Լէկե-
ղեցին, եթէ Սահակ և Սեբրուպը չլինէին՝
կորած էր լեզուն և գրականութիւնը, ե-
թէ Խորենացին չլինէր՝ կորած էր ազգի
պատմութիւնը, և ինչ և էն: Պատմութիւ-
նից տեսնում ենք, որ մինչև անգամ բար-
բարոնաց իշխանութեան օրերում, երբ
գոքա աշխատում էին բոլոր ուսումնա-
կանաց, հոգեւորականաց զիր և գրակա-
նութիւն սրի, կրակի և ջրի բերան տա-
լով միանգամայն անհետացնել Հայկա-
կան լեզուն և Վրիստոսի արեամբ կազ-
մեալ Լէկեղեցին, մեր հոգեւորականք այս
դառն օրերում անգամ չեն գաղաթել
յայտնի կամ ծածուկ զանազան խմա-
տուն և հեռատես նկատողութեամբ տա-
րածել և պահպանել լեզու և կրօն:
Նոքա այդ դառն ժամանակներում ամեն
փոքր իշատէ բարոյական զբաղեանքին
ձեռնադրելով հոգեւորական, ոլորիկ և
խօյն որ և իցէ մի վանք կամ քաղաք,
պարտաւորելով անշուշտ թէ ծածուկ և
թէ յայտնի ուսուցանել աշակերտներ:
Նշտողի համար այդ դաժանական միջոց-
ներում թուղթ և զրիչ գտանելն ան-

գամ դժուար է եղած, ուստի դոքա՝ որ
և իցէ հնարիւք, մի զեղեցիկ և հրաշալի
եռանդով թուղթը անխտակի կտոր շինե-
լով, խօկ գրիչը փայտի՝ ուսուցիչ և նաշա-
կերտներ, պահպանել են լեզու և կրօն, որ
այս տեսած է մինչև մեր Հայերի ներկայ
ժամանակը: Այժմեան ժամանակի ծերե-
րը հաստատում են նա և այս, — «Ո՛չ թէ
միայն չէինք կարող կարգալ և զրել, այլ
և չէինք կարող ազատ աղօթել և Լէկե-
ղեցի գնալ, մեր օծոքի լուսամտինց գա-
լիս էր ժամկոչը և երկիւղալից ձայնիւ,
իւր շուրջը նայելով, գոչում, — «Դամ
համեցէք,»:

Եսածներիս տպացուցութիւնը պարզ
տեսնում ենք նա և մինչև ցայսօր. այժմ
եթէ որ և իցէ քաղաք կամ գիւղ մաա-
նես և ցանկանաս իմանալ դոցա գրու-
թիւնը, կտեսնես՝ որ հազարից մէկն չկոյ
աշխարհականներից, որ զիր և կարգալ
իմանայ, և եթէ գտանվում են՝ դոքա էլ
հոգեւորականներ են, որք ըստ հին սովո-
րութեան, ինչպէս ասացի, իւրեանց կա-
րողութեան չափ, որ և իցէ հնարիւք զը-
րել և կարգալ են ուսուցանում փոք-
րիկ երեխայոց մինչև անգամ տնվարձ.
այսպէս աշխարհականներից ուսուցիչ,
ինչպէս հնումն, այնպէս էլ նորումս, հա-
զիւ ենք տեսնում, և եթէ լինում են՝ գո-
քա էլ վերջի ժամանակներիս ծնունդք
են: Նշտահա քանի տարի է, որ մեր ազ-
գը աննկարագրելի դառնութեամբ հոգե-
ւորականաց կանխատեսութեամբը և ի-
մաստուն անաջնորդութեամբը՝ անցան-
լով մեծամեծ քաջութիւններով՝ անձ-
նագոհութիւններով՝ սրոյ և հրոյ բերա-
նով հասել են այս ազատ և խաղաղ օ-

րերիս, որն որ վայելում ենք խաղաղութեամբ քաղցր և զթափառ հովանաւորութեան տակ՝ Աորին Այսերականն Սեծութեան Ինքնակալին ամենայն Ուսուց և կորոզանում ենք աղաա աղօթել, ազատ մտածել և ազատ ճանաչել բարին և չարը։ Բայց ի՞նչ օգուտ այս ազատ ժամերից, այս ոսկի դէն դարձց, երբ մենք չտրընդ բարւոյ ենք փոխանակում, հոգեւորականաց արած բարերարութիւնները չսրութեան հետ ենք փոխանակում, նոցա ուսումնասիրութիւնը՝ ուսումնասիրութեան հետ, նոցա անձնագոհութիւնը՝ անձնագոհութեան հետ, և ինչ և ինչ։ Որ տեղ ծածկենք այդ բարեբարների անմահ և երանութեան արժանի տօնելի անունները, Գրիգորները, Ներսէսները, և ինչ և ինչ։ Բայց և հոգեւորականաց մէջ շատ և շատ են գտնված աղգակործան և չարասիրտ անձինք, ինչպէս և այժմ ամեն տեղ և ամեն կերպ պաշտօնական մարդկանց մէջ էլ գտանվում է։ Բայց խոհեմութեամբ և ողջախոհութեամբ մտածելով մեր հոգեւորականաց նպատակը՝ ուրիշների պէս՝ չէ թէ ազգի կործանման և վրնասների համար է ծառայած և ծառայում, այլ նոցա կատարեալ քաղաքացիութեան, լուսաւորութեան և ամեն կերպի բարօրութեան համար է ծառայած և այժմ էլ ծառայում, ինչպէս տեսնում ենք մինչև այսօր՝ ես և վերջի Ահա Կաթառ Զօր սուրբ և երանական անմահ նպատակի մէջ։

Գեորգ Գ. Ահա Կաթառ Զայրապեան ամենայն Զայոց՝ այն օրից երբ նստում է մեր պապ Առսաւորէի Աթոռի վերայ, ամենին յայտնի է, որ սկսում է ժամանա-

կի պահանջներին համապատասխան դործ կատարել։ Աորին Ահա Կաթառութիւնը ամեն ուսումնասիրաններից զաւրկ քաղաքներում և զիւղօրէից մէջ ուսումնասիրաններ է կազմեցանում և ճիւղարանն էլ Էջմիածնում, ուսուցիչներ է ազարկում, զիր, զբաղանութիւն, լեզու է տարածում ընդհանուր ազգութեան մէջ, հեռեկան իւր նախորդաց՝ եկեղեցական բարեկարգութիւնների է հեռւում, այլասեռ և օտարառ երգեցողութիւնների տեղ, որ մտած էին Զայոց Ահիդեցին հալածանաց ժամանակներում, նորայիւ կարգ ու կանոնի տակ մտած ժամերգութիւններ է հաստատում, այնպէս որ այժմ ընդհանրապէս Զայոց Ահիդեցւոյ մէջ լսվում է մի հրաշալի, մի քաղցր երգեցողութիւն և մի հոգեշարժ Աստուածաշնորհութիւն։

Ովքեր են արդիօք գիշեր ու ցերեկ տնքուն և անհանգիստ արնոյ Ազգի և Ահիդեցւոյ պայծառութեան համար, եթէ ոչ մեր հոգեւոր Զայրերը, մինչդեռ մենք ուսում ենք, խմում ենք և մեծ մեծ խօսելով Արտաշէսից հրեշտակային վարք ենք պահանջում, և հոգեւորականութեան էլ ապագնալով, դէպի օտարների փառախը մտանացոյց լինելով, ազաղակներ ենք հանում լրադրաց միջոցով, որպէս թէ դամիկ ժողովրդոց դէպի բողոքականութիւն գաղթելն մի քանի հոգեւորականաց վարքի ազդութիւնն է պատճառ։ Ո՛հ սօրսալի զատողութիւն, ես պիտի ուրանամ իմ բարեբարներին, ես պիտի ապերախտաբար յուղայանամ, փախչելով իմ ծնող մօր ծոծից, մոռանալով նորա ինձ համար ունեցած սերը, երախտաբար իմ ախտի չար ցանկութիւնները կա-

սարկով և թշնամարտի իմ ծնողիս աստիճանով մտանել ծառերների վարակը ի վերջինս թիւն մի քանի աղէտ և անարդ հոգեորականաց: Զարմանալի է, որ մենք չենք օրինակում չաւ հոգեորականաց, այլ վատերը աւաջ բերելով պատճառ ենք լինում նոցա զանազան գայթակղութեանց: Ինչի՞ համար խնդրել և առնել «Արքեպիսկոպոս չենք օրինակում», նոցա անձնազոհութիւնը, նոցա հրեշտակային վարքը, նոցա ազգասիրութիւնը մեջ բերելով, այլ մի քանի անարդ հոգեորականների վարքի տղեղութիւնը պատճառ ենք շինում մեր մոլորութեան: Աթէ մի մարդի վարքի տղեղութիւնը պատճառ է մոլորութեան, ուրիմն և միւս մարդի վարքի սքրութիւնը պիտի լինի պատճառ ուղղութեան: Ո՛չ, այս չէ պատճառ մեր կործանման, այլ մեր աղիտութիւնը, որից ծագում է հպարտութիւն, հպարտութիւնից ամբարտաւանութիւն, ամբարտաւանութիւնից ատեղութիւն, ատեղութիւնից կործանումն: Այո, եթէ կուսկանայինք ուսումնասիրութիւն, կռնէինք մեր ձեռքը մեր հին հեղինակների հրաշալի և մարգարտաշար գրութիւնները, նոցա փայլուն և չքնաղ շարադրութիւնները, յայնժամ մենք լաւ կաննէինք և կխմանայինք մեր հոգեորականաց ընթացքը և նպատակը սկզբից մինչև ցայսօր, կճանաչէինք մեր Մայր Աղեղեցին, կխմանայինք նորա ունեցած սէրը դէպ ի մեզ, կճանաչէինք մեր բազմաբախտ անձնազոհ հայրերին, կխմանայինք նոցա արեան սրակին մեր վերկութեան համար, և յայնժամ մի երախտազարտ սքրալ կմտանէինք գոնեա տարին մի երկու

անգամ Աստուծոյ տունն, կլսէինք այն ահղ Հայրապետաց Աղեղեցւոյ ժամերգութիւնը, կհասկանայինք հոգեորականաց ազգու և հոգեշարժ ազօթքը և կկեղեցական բարեկարգութիւնները, կաննէինք ի հարկէ հրաշալի հիմնալի մաստղութեամբ զարդարուած սուրբ Աղեղեցին, պարզ յայնժամ կհասկանայինք, որ երկրի մէջ մեր առաջին է կանգնած սերովբէիք, քերովբէիք շրջապատած Աստուծոյ Աթոռ և յայնժամ ապաշխարուած սրալ կճանաչէինք մեր բարեբարները և մի երախտագէտ ջեբեռանդութեամբ կանկանէինք Վասնի Աթոռի առաջը, արտասուածոր աչօք և հիկեկական ձայնիւ կխնդրէինք մեր սխալների ներողութիւնը:

Ի հարկէ ատելով վերնային ուսումնալի և ատենք հոգեորականութիւնը, բայց մեր տօնելի հոգեորականութիւնը սկզբից մինչև ցայսօր նոյնն է. նա սովոր է երիտասարդների անփորձ պահանջներին պատասխանել խոհեմութեամբ և հեռատեսութեամբ, նա սովոր է անձնազոհութեամբ հալածուել Ազգի և Աղեղեցւոյ պայծառութեան և յառաջադիմութեան համար, նորան վազելի բան չունի, նա չէ կարող վողովուել և իւր մի քանի օրուց անփորձ խօսքերից վերաւորուել, այլ ներկով, սերելով մեզ և մեր որդւոց յառաջադիմութեան, մեր սուրբ Աղեղեցւոյ պայծառութեան, մեր աղիւ լեզուի հաստատութեան համար անձանձիր կաշխատէ և կհալայ իւր նախորդաց օրինակով:

Այսպէս ճանաչելով մեր բարեբարները, մեր անձնազոհ հայր հոգեորականաց

Թիւնը կ'ապրտաւորուի՞նք՝ ոչ միայն որ-
դիական քաղցր սիրով, մի ազնիւ հնա-
զանգութեամբ համարուել այն աջը, որոյ
հովանաւորութեան տակ մինչև ցայժմ
պահպանուեալ է մեր սուրբ Ազնիւիցին և
ազնիւ լիզուն, այլ նա և մի երախտագէտ
սրտիւ կաշխատենք օգնել դոցա իւրեանց
ազգաշինութեան նպատակի մէջ, ոմանք
նիւթական միջոցով, ոմանք զրաւոր աշ-
խատութեամբ և ոմանք էլ իւրեանց ու-
նեցած քանքարով:

ՀԱՆԱՆ ՇԱՀՈՒՆԵԱՆՑ.

Ի Ռադոս.

ՄԵՐ ՈՋԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՄՈՒԹԻՒՆԸ:

Հին Եւրոպայի ՀԱՅ ԲՈՒՄՏՈՆԵՒՅՆ

ՄԵԿ ԽՈՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ:

Հ. Վ. — Դո՛ւնե՛ս եղբայր, նոր տարւոյ
առթիւ ինչ կ'զրեն մեր ազգին լրագիրները:

Նոր Վրէժապահայ: — «Չորս տարի
«շարունակ «Մշակը», իւր տոկուն աշ-
«խատանքի համար, թէ մեր հին «Երո-
«դէց, թէ մեր երիտասարդ Խաբէ՛թէն-
«ցեայից (°) որպէս վարչ ստացել է բա-
«ւական հայհոյանք և բամբաստանք: (Տես
«Մշակ № 1 Յունվարի 15.): Ըստ իս-
շատ իրաւ է ասածը, և այդ խորհրդա-
ծութեան տակ ծածկուած է գեղեցիկ
նպատակ ուղղային յառաջադիմութեան:

Հին Վրէժապահայ: — Փոքր ինչ յա-
ռաջ տար ընթերցանութիւնդ և կտես-
նես՝ որ այդ բոլոր յօդուածը զայն շարա-
գրողին անձնագովութիւն է. վասն զի
եթէ մի մարդ հայկական հին «Երո-
թիւնապետութեան, իսկ նորը նախանշո-
ւած

բացա՛հ համարի, ապաքէն ինքզինքը՝ որ
նորագոյն «Երո-դէց է և իւր Գաղափար-
նէրո-դէր, բացէ ի բաց գովարանած կլինի,
շատ լաւ գիտնալով՝ որ իրմէն զատ հա-
մակրող չունի իւր անձին. ուստի իրրե-
նորագոյն քրիստոնեայ ներկի է նմա չը-
դիանալը այն ճշմարտութիւնը՝ թէ «Մշակը
գովեսցեն զքեզ և մի քո բերան»:

Ն. Վ. — Եւրոպայի ճշմարիտ ասացիր, բայց
այնու ամենայնիւ պէտք է խոստովանիս
որ այդ նորագոյն երիտասարդութիւնը
մեր ազգին համար կ'աւստըլի, քրտինք,
կ'թափէ և կ'ցանկայ լրագրութեան միջո-
ցով նպաստել ազգի ուսումնական և բա-
րոյական յառաջադիմութեանը: Ուրեմն
իրաւամբ պիտարակելի են այն անձինք,
որք չեն համակրեր նոցա ուղղութեան՝
համոզմանց և լուսաւոր գաղափարներուն:

Հ. Վ. — Աս բնաւ չեմ տարակուսիր
նոցա աշխատասիրութեան վերայ. բայց
կետէք ենթադրել թէ նոքա երբէք չեն
կարող նպաստել մեր Բարոյական զար-
գացման՝ քանի՜ որ հիմնայատակ կողմէն
ընել բարոյականութեան հիմունքը, որ է
կրօնը, և անխնայ կ'հարուածեն անոր ներ-
կայացուցիչ կղերականութիւնը շատ ան-
գամ՝ յանիրաւի թիւր մեկնութիւններ
տալով այն դաստիարակին գործառնու-
թեանը, որ ի սկզբանէ հեռէ մեր Ազգին
մասաւոր, հոգևոր և բարոյական դաստիա-
րակը համարուած է իրաւամբ:

Ն. Վ. — Եւրոպայի կողմանէ կնիւրէք ձե-
հեռ չհամոզուիլ. վասն զի մեր ազգի կղեր-
ընդհանրապէս թմրած լինելով՝ ես ալ
նոյն կարծիքէն եմ՝ որ այդ անսակ կծու
գիտատուութիւնը կրնայ աղբոյ ներգոր-
ծութիւն և փրկարար հեռեանքներ ար-